ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«27» փետրվարի 2020 թվականի N 193

ՎԱՀԵ ԲԱԼԱԲԵԿՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԶԱԿԱՆ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ 07-015-0186-0011 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔՆ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 8-րդ կետի 3-րդ ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 17-ի N 1066-Ն որոշման 7-րդ կետով և հիմք ընդունելով Վահե Բալաբեկյանի 2020 թվականի փետրվարի 26-ի թիվ 641/07դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Վահե Բալաբեկյանին սեփականության իրավունքով պատկանող Չարենցավան համայնքի Արզական գյուղում գտնվող **07-015-0186-0011** ծածկագրով 9.99681 հա գյուղատնտեսական նշանակության ***4-րդ կարգի վարելահողից 4.07745 հա վարելահողի*** հողատեսքը համարել փոփոխված՝ որպես ***բազմամյա տնկարկներ հողատեսքի՝ հնդավոր այգի՝ ըստ կից ներկայացվող հատակագծի:***
2. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակկոմունալ տնտեսության բաժնի պետ ***Բ. Բալբաբյանի*** վրա:
3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ԱԳԿՊԿ Մարզերի միավորված ստորաբաժանումում:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

SHAHGALDYAN HAKOB 1101740744

Digitally signed by SHAHGALDYAN HAKOB 1101740744
Date: 2020.02.28 14:35:05 +04'00'

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«27» փետրվարի 2020 թվականի N 192

«ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ԻՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով ***«ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ի տնօրենի*** 2020 թվականի փետրվարի 24-ի թիվ 618/04 դիմումը և հիմք ընդունելով Չարենցավան համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 17-ի «Տեղական տուրքերի դրույքաչափերը սահմանելու մասին» թիվ 67-Ն որոշումը՝ որոշում եմ.

1.Թույլատրել ***«ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ին*** տեղադրելու 2.5 քմ մակերեսով գովազդային վահանակ **ք.Չարենցավան *1-ին թաղամաս 8-րդ շենք թիվ 1/1 շինության ճակատային հատվածում***:

2.Գովազդային վահանակի տեղադրման համար մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը տեղական տուրք սահմանել ***37500 ՀՀ*** դրամ:

3 .Սույն որոշման կատարման հսկողությունը դնել քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակարանային կոմունալ տնտեսության բաժնի պետ ***Բ. Բալբաբյանի*** վրա:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«26» փետրվարի 2020 թվականի N 191

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով, Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն, 912-Ն և 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշումներով՝ ***որոշում եմ***.

1. Չարենցավանի Հոկտեմբերյան փողոցին հարող տարածքում գտնվող 31.2 քմ արտաքին մակերեսով՝ Զարուհի Գևորգյանի կողմից ինքնակամ կառուցված ավտոտնակը /ներքին մակերես՝ 28.99 քմ/ ճանաչել օրինական և գրանցել համայնքային սեփականության իրավունքը:
2. Ավտոտնակի սպասարկման նպատակով հատկացնել 31.2 քմ մակերեսով՝ բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողատարածք:
3. Ընդունել ի գիտություն, որ՝

1) Շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը:
2) Շինությունը կառուցված չէ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա:
3) Շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

4. Օրինական ճանաչված շինությունը և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասը հասցեավորել **ք.*Չարենցավան Հոկտեմբերյան փողոց թիվ 1/3*** հասցեով:
5. Սույն որոշումը սահմանված կարգով ենթակա է գրանցման ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ-ում:
6. Սույն որոշումը գրանցումից հետո առաջարկել ինքնակամ կառույցն իրականացրած ***Զարուհի Գևորգյանին***՝ գնման նախապատվության իրավունքով ձեռք բերելու շինությունը և նրանով զբաղեցրած հողատարածքը:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«21» փետրվարի 2020 թվականի N 190

ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

«Պրեմ Սփենդ» ՍՊԸ-ի տնօրեն ***Էդգար Խանզադյանը*** դիմել է իր գործունեության վայրում՝ Չարենցավան քաղաքի Կարեն Դեմիրճյանի անվան հրապարակ թիվ 3/2, Շինարարների փողոց թիվ 2/2 և Խանջյան փողոց թիվ 14/1 շինությունների տարածքում գտնվող առևտրի օբյեկտներում, ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն ստանալու խնդրանքով (մտից N 593/12 առ 2020 թվականի փետրվարի 20-ի):

Հաշվի առնելով, որ ըստ N 2470100841810010 անդորրագրի դիմումատուն 2020 թվականի առաջին եռամսյակի համար կատարել է Չարենցավան համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 17-ի N 67-Ն որոշմամբ նախատեսված վճարումները, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. ***«Պրեմ Սփենդ» ՍՊԸ-ին*** 2020 թվականի առաջին եռամսյակի ընթացքում թույլատրել իր գործունեության վայրերում՝ Կարեն Դեմիրճյանի անվան հրապարակ թիվ 3/2, Շինարարների փողոց թիվ 2/2 և Խանջյան փողոց թիվ 14/1 հասցեներում գտնվող առևտրի օբյեկտներում իրականացնելու ծխախոտի արտադրանքի վաճառք (Վկայական N014143):

2. Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի առևտրի, սպասարկման, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ ***Վ. Բարսամյանի*** վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 էլ. Փոստ՝ Charentsavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«21» փետրվարի 2020 թվականի N 189

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՏՎԱԾԻՑ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Չարենցավան համայնքի ավագանու 2020 թվականի հունվարի 20-ի «Չարենցավան համայնքում սոցիալական աջակցություն տրամադրելու կարգը սահմանելու մասին» թիվ 7 որոշմամբ սահմանված կարգը, Չարենցավան համայնքի սոցիալապես անապահով բնակչի դիմումը՝ ֆինանսական օգնություն ստանալու մասին, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. Չարենցավան համայնքի ներքոհիշյալ սոցիալապես անապահով բնակչին հատկացնել դրամական օգնություն՝ «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից.

Գևորգյան	Արաքսյա	003368461	30 000	դրամ

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«20» փետրվարի 2020 թվականի N 188

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով, Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն, 912-Ն և 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշումներով՝ ***որոշում եմ***.

1. Չարենցավանի Երևանյան փողոցին հարող տարածքում գտնվող 25.04 քմ արտաքին մակերեսով՝ Արմեն Հովհաննիսյանի կողմից ինքնակամ կառուցված ավտոտնակը /ներքին մակերես՝ 23.33 քմ/ ճանաչել օրինական և գրանցել համայնքային սեփականության իրավունքը:
2. Ավտոտնակի սպասարկման նպատակով հատկացնել 34.4 քմ մակերեսով՝ բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողատարածք:
3. Ընդունել ի գիտություն, որ՝
   1) Շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը:
   2) Շինությունը կառուցված չէ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա:
   3) Շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
4. Օրինական ճանաչված շինությունը և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասը հասցեավորել **ք.*Չարենցավան Երևանյան փողոց թիվ 2/5*** հասցեով:
5. Սույն որոշումը սահմանված կարգով ենթակա է գրանցման ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ-ում:
6. Սույն որոշումը գրանցումից հետո առաջարկել ինքնակամ կառույցն իրականացրած ***Արմեն Հովհաննիսյանին***՝ գնման նախապատվության իրավունքով ձեռք բերելու շինությունը և նրանով զբաղեցրած հողատարածքը:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«19» փետրվարի 2020 թվականի N 187

ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՔԱՂԱՔ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՉԱՐԵՆՑԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 7/2 ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշումների, հաշվի առնելով ***Կարինե Սաֆարյանի*** համաձայնությունը՝ ***որոշում եմ.***

1.Օրինական ճանաչված Չարենցավան քաղաքային համայնքի սեփականություն հանդիսացող հիմք՝ N 13022020-07-0131 վկայական) ***ք. Չարենցավան Չարենցի փողոց թիվ 7/2*** հասցեում գտնվող 40.11 քմ արտաքին մակերեսով առևտրի սրահը (ներքին մակերես՝ 30.6քմ) և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված 77 քմ մակերեսով հողատարածքը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով օտարել կառույցն իրականացրած ***Կարինե Սաֆարյանին***

2. Ուղղակի վաճառքի գները սահմանված են հետևյալ հաշվարկով.

1) Առևտրի սրահի 1 քառակուսի մետրի համար՝ 18900 (տասնութ հազար ինը հարյուր) դրամ (տարածագնահատման 8-րդ գոտի, կիրառված գործակիցը՝ 0.21).

2) առանձնացված հողամասի 1 քառակուսի մետրի կադաստրային արժեքը՝ 2940 (երկու հազար ինը հարյուր քառասուն) դրամ:

3. ***Կարինե Սաֆարյանը*** պարտավոր է վճարել.

1) համայնքապետարանի 900135101559 հաշվեհամարին՝ 758080 (յոթ հարյուր հիսունութ հազար ութսուն) դրամ՝ առևտրի սրահի գինը.

2) համայնքապետարանի 900135101484 հաշվեհամարին՝ 226380 (երկու հարյուր քսանվեց հազար երեք հարյուր ութսուն) դրամ՝ հողամասի գինը:

4. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների և տուրքերի վճարումը կատարվում է ***Կարինե Սաֆարյանի*** կողմից:

5. Հանձնարարել Չարենցավանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակարանային կումունալ տնտ. բաժնի պետ ***Բենիկ Բալբաբյանին*** ինքնակամ կառույցն իրականացրած անձի կողմից սույն որոշման 1-ին կետում նշված կառույցի և դրա համար առանձնացված հողամասի օտարման համար համայնքի ղեկավարի անունից ***Կարինե Սաֆարյանի*** հետ կնքել անշարժ գույքի և հողատարածքի օտարման պայմանագիր:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«19» փետրվարի 2020 թվականի N 186

ՀՈՂԱՄԱՍԻ ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ և 9-րդ կետերի պահանջներով, հիմք ընդունելով քաղաքացի Խաչիկ Կիրակոսյանի դիմումը՝ հողամասի առուվաճառքի պայմանագիր կնքելու մասին՝ ***որոշում եմ.***

1. Սեփականության իրավունքով Խաչիկ Կիրակոսյանին պատկանող Չարենցավան համայնք ք. Չարենցավան Խորենացու փողոց 4-րդ փակուղի թիվ 4 հասցեում գտնվող 07-007-0055-0042-001 կադաստրային ծածկագրով 43.6 քմ ավտոտնակի սպասարկման համար առանձնացված բնակավայրերի բնակելի կառուցապատման 07-007-0055-0042 կադաստրային ծածկագրով 29.0 քմ մակերեսով հողամասը ճանաչել նրա սեփականությունը՝ տվյալ պահին գործող կադաստրային արժեքի վճարման անդորրագիրը ներկայացնելու դեպքում:

2. Խաչիկ Կիրակոսյանի հետ սահմանված կարգով կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«19» փետրվարի 2020 թվականի N 185

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԱՌԱՆՁՆԱՑՄԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի ապրիլի 06-ի թիվ 516-Ն և 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշումների դրույթներով՝ ***որոշում եմ.***

1. Չարենցավան համայնքի սեփականություն համարվող 07-015-0064-0036 ծածկագրով հողատարածքից առանձնացնել 0.062 հա մակերեսով հողատարածք՝ նկատի ունենալով, որ հողամասի նպատակային նշանակությունն է բնակավայրերի, իսկ գործառնական նշանակությունը՝ այլ հողեր:

2. Առաջացած հողատարածքը հասցեավորել ***Չարենցավան համայնք գյուղ Արզական Ն.Զարյան փողոց թիվ 32/3 հողատարածք:***

3. Սույն որոշումից բխող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

4. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակկոմունալ տնտեսության բաժնի պետ ***Բ. Բալբաբյանի*** վրա:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«19» փետրվարի 2020 թվականի N 184

ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՔԱՂԱՔ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 44 ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշումների, հաշվի առնելով ***Գայանե Հակոբյանի*** համաձայնությունը՝ ***որոշում եմ.***

1.Օրինական ճանաչված Չարենցավան քաղաքային համայնքի սեփականություն հանդիսացող հիմք՝ N 13022020-07-0140 վկայական) ***ք. Չարենցավան Թումանյան փողոց թիվ 44*** հասցեում գտնվող 29.1 քմ արտաքին մակերեսով առևտրի սրահը (ներքին մակերես՝ 26.49քմ) և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված 29.1 քմ մակերեսով հողատարածքը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով օտարել կառույցն իրականացրած ***Գայանե Հակոբյանին***

2. Ուղղակի վաճառքի գները սահմանված են հետևյալ հաշվարկով.

1) Առևտրի սրահի 1 քառակուսի մետրի համար՝ 18900 (տասնութ հազար ինը հարյուր) դրամ (տարածագնահատման 8-րդ գոտի, կիրառված գործակիցը՝ 0.21).

2) առանձնացված հողամասի 1 քառակուսի մետրի կադաստրային արժեքը՝ 2940 (երկու հազար ինը հարյուր քառասուն) դրամ:

3. ***Գայանե Հակոբյանը*** պարտավոր է վճարել.

1) համայնքապետարանի 900135101559 հաշվեհամարին՝ 550000 (հինգ հարյուր հիսուն հազար) դրամ՝ առևտրի սրահի գինը.

2) համայնքապետարանի 900135101484 հաշվեհամարին՝ 85560 (ութսունհինգ հազար հինգ հարյուր վաթսուն) դրամ՝ հողամասի գինը:

4. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների և տուրքերի վճարումը կատարվում է ***Գայանե Հակոբյանի*** կողմից:

5. Հանձնարարել Չարենցավանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակարանային կումունալ տնտ. բաժնի պետ ***Բենիկ Բալբաբյանին*** ինքնակամ կառույցն իրականացրած անձի կողմից սույն որոշման 1-ին կետում նշված կառույցի և դրա համար առանձնացված հողամասի օտարման համար համայնքի ղեկավարի անունից ***Գայանե Հակոբյանի*** հետ կնքել անշարժ գույքի և հողատարածքի օտարման պայմանագիր:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«18» փետրվարի 2020 թվականի N 183

ՉԱՐԵՆՑԱՎԱՆԻ ՔԱՂԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾԿՈՄԻ 1994 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 26-Ի ԹԻՎ 12 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով և քննարկելով Չարենցավան քաղաքի 5-րդ թաղամասի 16-րդ շենքի թիվ 35 հասցեի բնակիչ ***Ալլա Կակոյանի*** 2020 թվականի փետրվարի 17-ի թիվ 549/11 դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Չարենցավանի քաղխորհրդի գործկոմի 1994 թվականի օգոստոսի 26-ի «Պետական ֆոնդի տներում բնակարանները քաղաքացիների կողմից անվճար սեփականաշնորհելու մասին» թիվ 12 որոշման մեջ ***«Վարդանյան Աղունիկ Համայակի»*** անունը փոխարինել ***«Վարդանյան Աղունիկ Հմայակի»*** անունով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«17» փետրվարի 2020 թվականի N 182

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ,ՆՈՐ ԱՌԱՋԱՑԱԾ ՄԻԱՎՈՐԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքի 46-րդ հոդվածով, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման դրույթներով ինչպես նաև հաշվի առնելով Արթուր Մնացականյանի 2020 թվականի փետրվարի 10-ի թիվ 473/07 դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Տալ համաձայնություն ***Արթուր Մնացականյանին*** սեփականության իրավունքով պատկանող բնակավայրերի հասարակական կառուցապատման նշանակության ***ք. Չարենցավան Պռոշյան փողոց թիվ 9*** (0.006 հա) և ***ք. Չարենցավան Պռոշյան փողոց թիվ 9/1*** (0.01084 հա) հողամասերը միավորել՝ դարձնելով մեկ միավոր և հասցեավորել որպես ***ք. Չարենցավան Պռոշյան փողոց թիվ 9-9/1 բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամաս*** (0.01684 հա ընդհանուր մակերեսով):
2. Սույն որոշմամբ սահմանված իրավունքները գրանցել ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ-ում:
3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակարանային կոմունալ տնտեսության բաժնի պետ ***Բ. Բալբաբյանի*** վրա:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«17» փետրվարի 2020 թվականի N 181

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 20-Ի ԹԻՎ 122 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ՝ ***որոշում եմ.***

1. Չարենցավան համայնքի ղեկավարի 2020 թվականի հունվարի 20-ի « **Անշարժ գույքը բաժանելու համար համաձայնություն տալու և նոր առաջացած միավորները հասցեավորելու մասին»** թիվ 122 որոշման 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ՝
   «Ճանաչել օրինական սեփականության իրավունքով ***Ռոբերտ Թովմասյանին*** **պատկանող հասարակական նշանակության** ***ք. Չարենցավան 5-րդ թաղամաս 10-րդ շենք թիվ 3 շինությունում ինքնակամ բացված թվով 9 պատուհանները, այն*** **բաժանել 2 միավորի և հասցեավորել որպես** ***ք. Չարենցավան 5-րդ թաղամաս 10-րդ շենք թիվ 3*** **(մակերեսը՝ 134.58քմ)** ***և ք.Չարենցավան 5-րդ թաղամաս 10-րդ շենք թիվ 3/1*** **(մակերեսը՝ 125.44 քմ) միավորներ»:**
2. **Նոր բացված պատուհանների օրինականացման համար համայնքապետարանի 900135101559 հաշվեհամարին վճարել 18900 ՀՀ դրամ:**
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՁԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Charentsavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«14» փետրվարի 2020 թվականի N 180

ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՔԱՐՈՉԶԱԿԱՆ ՊԱՍՏԱՌՆԵՐ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՎՃԱՐ ՏԵՂԵՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Ընտրական օրենսգրքի» 21-րդ հոդվածի 3-րդ մասով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. 2020 թվականի ապրիլի 05-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեին «ԱՅՈ» և «ՈՉ» քարոզչության կողմերի կողմից քարոզչական պաստառների և այլ նյութերի փակցման համար համայնքի տարածքում առանձնացնել հետևյալ հատուկ տեղերը.

1) ք.Չարենցավան «Գանգրահեր տղա» փողոց
2) ք.Չարենցավան Իսահակյան և Քոչարի փողոցների հատման հրապարակ
3) ք.Չարենցավան Կ. Դեմիրճյանի անվան հրապարակ
4) ք.Չարենցավան Կինոթատրոնի հրապարակ
5) ք.Չարենցավան Չարենցի և Խորենացու փողոցների հատման խաչմերուկ
6) ք.Չարենցավան Չարենցի և Շահումյան փողոցների հատման խաչմերուկ
7) Չարենցավան համայնք գ. Ալափարս Երջանկության փողոց 18 շինություն
8) Չարենցավան համայնք գ. Ալափարս 5-րդ փողոց թիվ 1 շինություն
9) Չարենցավան համայնք գ.Արզական Բջնիի խճուղի և Ծաղկունյաց փողոցի հատման խաչմերուկ
10) Չարենցավան համայնք գ.Արզական Թեղենիքի խճուղու և Երևանի փողոցի հատման խաչմերուկ
11) Չարենցավան համայնք գ.Արզական Երևանի փողոցի և Բարեկամության փողոցի հատման խաչմերուկ
12) Չարենցավան համայնք գ.Արզական Բարեկամության փողոցի և Եղիշե Չարենցի փողոցի հատման խաչմերուկ
13) Չարենցավան համայնք գ.Ֆանտան Գ.Ոպանյան փողոց 43 շինություն
14) Չարենցավան համայնք գ.Կարենիս Գյուղի Մուշի փողոց 34 շինություն
15) Չարենցավան համայնք գ.Բջնի 1-ին փողոց թիվ 102 շինություն/ Մշակույթի տուն/
16) Չարենցավան համայնք գ.Բջնի 1-ին փողոց 14 փակուղի թիվ 1 շինություն.

Նշված հատուկ տեղերում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեի «ԱՅՈ» և «ՈՉ» քարոզչության կողմերին տրամադրվում են հավասար հնարավորություններ (հավասար մակերեսներ):

3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեին մասնակցող «ԱՅՈ» և «ՈՉ» քարոզչության կողմերին առաջարկել սահմանված ժամկետում ապահովել իրենց կողմից փակցված քարոզչական պաստառների և այլ նյութերի հավաքումը:
4. Որոշման կատարման վերահսկողությունը դնել համայնքի ղեկավարի տեղակալ ***Վ. Չիլինգարյանի*** վրա:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**